ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1964 Общественные науки

5985

ՆՈՐԱՀԱՅՏ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐ ԳԵՂԱՄԱ ԼԵՌՆԵՐԻՑ

Դեռևս 1909 թ. Գեղամա լեռներում շրջագայելու ժամանակ ռուս ականավոր հնագետներ Ն. Յա. Մառը և Յա. Ի. Սմիրնովը հայտնաբերեցին պաշտամունքային մի շարք կոթողներ, որոնք ինչպես տեղի բնակիչներին, այնպես էլ գիտական աշխարհին ծանոթ են «վիշապներ» անունով։

Ն. Մառի և Յա. Սմիրնովի հրատարակած աշխատությունը[1] «վիշապների» մասին իր ժամանակին մեծ աղմուկ բարձրացրեց գիտնականների շրջանում։

Հետագայի բոլոր ուսումնասիրողներն, (բացառությամբ Բ. Բ. Պիոտրովսկու[2]) առանց տեսնելու այդ կոթողները, հանդես եկան միանգամայն տարբեր կարծիքներով, իրենց հերթին զարգացնելով մի շարք տեսություններ[3]։



Նկ. 1

Ինչպես հայտնի է Գեղամա, հետագայում և Արագածի լեռներում հայտնաբերված ձկնակերպ ու քառակող, բարձրաքանդակներով զարդարված այս պաշտամունքային կոթողները Հայկական լեռնաշխարհից դուրս այլ զուգահեռներ համարյա չունեն։ Այդ իսկ պատճառով էլ հայ հնագիտության համար առանձնակի հետաքրքրություն և գիտական արժեք է ներկայացնում վերոհիշյալ հուշարձանների ուսումնասիրումը, հատկապես նրանց թվագրության պարզաբանումը։

---

[1] Н. Я. Марр и Я. И. Смирнов. Вишапы, Труды Гос. Акад. Истор материальной культуры, т. I, 1931; *Նույնի՝* Les Vichaps, Leningrad, 1931.

[2] Б. Б. Пиотровский, Вишапы, Ленинград, 1939.

[3] *Մ. Արեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իրրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, 1941*; Гр. Капанцян, О каменных стелах на горах Армен Ереван, 1952; В. А. Миханкова, Вишапы, Сообщение ГАИМК, 1931, № 9



Նկ. 2



Նկ. 3





Նկ. 1

1963 թ. սեպտեմբերին Հայկական ՍՍՌ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական-հետախուզական արշավախումբը մեր մասնակցությամբ նորից եղավ Գեղամա լեռներում, մասնավորապես այն վայրերում, որտեղ գտնվում էին Ն. Մառի և Յա. Սմիրնովի կողմից հայտնաբերված կոթողները (Դառնի գյուղից արևելք)։

Ձկնակերպ և քառակող այդ կոթողները հիմնականում գտնվում են բարձրագիր վայրերում, որոնք հայտնի են Աժդահա-յուրտ, Թոխմախան-գյոլ (կամ Վանքի գյոլ), Գյոլ-յուրտ, Իմիրզեկ անուններով։



Նկ. 1

Մեր հետախուզական շրջագայությունների շնորհիվ հաջողվեց հայտնաբերել նաև հինգ նոր կոթողներ, որոնք չէին տեսել Ն. Մառը և Յա. Սմիրնովը։ Ինչպես նախկինում հայտնի, այնպես էլ նորահայտ այդ կոթողները պատրաստված են բաց մոխրագույն բազալտից և անդեզիտից։

Մեր նպատակն է այստեղ միայն հրապարակել այդ նորահայտ հուշարձանները, առանց որևէ մեկնության և նախնական դիտողության։ Կոթողներից երկուսը հայտնաբերվել են Թոխմախան լճի հատակից, շինարարական աշխատանքների ժամանակ (նկ. 1)։

Հուշարձաններից առաջինը 2,5 մ. բարձրությամբ, 80 սմ լայնությամբ և 22 սմ հաստությամբ բար է, որն իր վրա կրում է հարթ, պրիմիտիվ քանդակագործության դրոշմ։ Քարի վրայի բարձրաքանդակը նվիրված է հգան պաշտամունքին։ Պարզորոշ երևում են եզան գլուխը առաջին ոտքերը։ Քանդակագործին հաջողվել է պարզ հնարներով տալ եզան գլխի ընդհանուր գծային պատկերը, նրա առանձին մանրամասներով։ Եզան ճակատից իջնում են կոր պոզեր իսկ նրանց վերևում՝ ականջները և վիզը։ Եզան ողջ պատկերը լիմաստավորում են ակնախոռոչները, ռունգը և բերանը։

Թոխմախան լճից հայտնաբերված մյուս հուշարձանը ձկնակերպ կոթող է մոխրագույն բազալտից։ Այն ունի 3,40 մ. երկարություն, 70—25 սմ լայնություն։ Կոթողի վրա շատ լավ երևում են ձկան բերանը, աչքերը և խոռիկները։ Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Աժդահա-յուրտից 4 կմ հեռավորության վրա Դավագյոզի-յուրտ կոչվող վայրում գտնվող երեք միանման քառակող կոթողները, որոնց վրայի բարձրաքանդակները ցավոք սրտի ոչնչացվել (նկ. 2)։ Կոթողներից մեկն ունի 3,90 մ. երկարություն, 1 մ—90 սմ լայնություն և 50 սմ

տութուն, իսկ մյուսը՝ 2,35 մ. երկարություն, 70—60 սմ լայնություն, 30 սմ հաստություն։ Առաջինի վրա բանդակված է եզան գլուխ։ Ընդհանուր, սխեմատիկ գծագրությամբ պատկերված են եզան դուրս ցցված ականջները, ականջները, պոզերը, ճակատը և ծնոտը։ Երկրորդ կոթողի վրայի բարձրաքանդակը խիստ քայքայված է, սակայն պատկերի գծագրությունը հնարավորություն է տալիս ասելու, որ այս հուշարձանը ևս իմաստավորում է եզան պաշտամունքը։

Մեկ այլ հուշարձան, կապված ջրի պաշտամունքի հետ, հայտնաբերվեց Իմիրզեկից ոչ շատ հեռու, Բզովանի-յուրտի (Արտաշատի շրջանի Բզովան գյուղի ամառային արոտատեղի) շրջակայքում, Բաբա-փարի կոչվող վայրում (նկ. 3)։ Այս կոթողը բազալտե մի հսկայական ձուկ է, 5,20 սմ երկարությամբ, 90—50 սմ. լայնությամբ, 2,25 սմ. շրջագծով։ Ձուկը բանդակված է իր բոլոր մանրամասներով։ Նրա վրա երևում են բարձրաքանդակ բերանը, աչքերը, խռիկները, թևիկները և լողանները։

Մենք այստեղ ցանկանում ենք կանգ առնել նաև մեկ այլ հուշարձանի նկարագրության վրա, որը հայտնաբերել էին Ն. Մառը և Յա. Սմիրնովը Աժդահա-յուրտում։ Այդ մի քառակող կոթող է, որի երկու լայն մասերում կան եզ պատկերող բարձրաքանդակներ։ Ն. Մառը և Յա. Սմիրնովը հրապարակել են կոթողի վրայի միայն մեկ բարձրաքանդակ պատկերը, այն էլ ոչ ամբողջովին[4]։ Ըստ երևույթին կոթողն այն ժամանակ ոչ թե կողքի է ընկած եղել, ինչպես հիմա, այլ մեջքի վրա, և նրանք մեկ երեսը գննելով չեն ենթադրել մյուս երեսի բարձրաքանդակի գոյության մասին։

Կոթողի մանրամասն զննումը հնարավորություն տվեց վերականգնելու երկու բարձրաքանդակներն էլ ամբողջովին։ Կոթողն ունի 2,5 մ. բարձրություն, 1 մ—70 սմ. լայնություն, 47 սմ. հաստություն։ Երկու պատկերներն էլ նվիրված են եզան պաշտամունքին։ Բարձրաքանդակներից առաջինի վրա երևում են եզան գլուխը, ականջները, վիզը, պոզերը, աչքերը, ունգը և առաջին ոտքերը։ Երկրորդ բարձրաքանդակը պատկերում է եզն ամբողջովին, սակայն ընդհանուր գծագրությամբ։ Եզը պատկերված է միայն գլխով, պոզերով, առաջին ոտքերով, իրանի հիմնական (այն էլ ուռուցիկ) մասով և պոչով (նկ. 4[1], և 4[2])։

Ահա սրանք են նորահայտ պաշտամունքային կոթողները, որոնց ուսումնասիրությունը անշուշտ գիտական մեծ կարևորություն է ներկայացնում։ Մեզ մնում է միայն ամսագրի միջոցով արտահայտել մեկ ջերմ ցանկություն՝ փրկել Գեղամա, ինչպես և Արագածի լեռներում գտնվող այս հուշարձանները, որոնք կարող են կորստյան մատնվել։

Լ. Ա. Բարսեղյան
Ժ. Դ. Խաչատրյան
Ա. Ա. Քալանթարյան

Л. А. Барсегян, Ж. Д. Хачатрян, А. А. Калантарян

НОВОНАЙДЕННЫЕ КУЛЬТОВЫЕ СТЕЛЫ НА ГЕГАМСКИХ ГОРАХ

Резюме

Еще в 1909 г. Н. Я. Марром и Я. И. Смирновым на Гегамских горах были обнаружены каменные стелы, получившие в специальной литературе название вишапов. Впоследствии ряд исследователей (кроме Б. Б. Пиотровского) изучил их, не видя самих памятников.

В 1963 г. авторы настоящей статьи побывали в указанных горах, где они нашли пять новых вишапов, три из которых обнаружены на дне озера Тохмах (рис. 1, 2), остальные в местности Бзован-Аждага-юрт (рис. 3, 4).

Целью настоящей статьи является публикация новых материалов для дальнейшего изучения.

[4] N. Marr et J. Smirnov, Les Vichaps, Leningrad, 1931, էջ 65։